

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/2

18 հունիսի 2013 թ.

Քննարկվեց <Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 1-ին բաժնի պետի 15.05.2013 թ-ի թիվ 1422409 վարչական ակտի դեմ:

<Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

2013 թ-ի մայիսի 15-ին ՕՀՎ աշխատակիցների կողմից կազմվել է թիվ 1422409 Արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որում մասնավորապես նշված է, որ.

<Հիմք ընդունելով <Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին> ՀՀ օրենքով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները և 15.05.2013 թ-ին կազմված արձանագրությունը պարզվեց, որ 15.05.2012 թ-ին ժամը 10:00-ի սահմաններում, <Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ-ի (այսուհետ նաև ընկերություն) վարձու աշխատող՝ վարորդ Հոկոտեմ Ռուլանդի Առուշանյանը /բնակվող ք.Գորիս, Վ.Մամիկոնյան 97/, ընկերությանը պատկանող <ԻՍՈՒԶՈՒ> մակնիշի 784ՄԼ52 համարանիշի բեռնատար ավտոմեքենայով իրականացնում էր ապրանքների առաքում՝ առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի: Տվյալ պահին առաքվում էր.>:

Վերոնշյալ Արձանագրության հիման վրա 15.05.2013 թ-ին կազմվել է թիվ 1422409 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով <Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ-ին համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28 հոդվածի՝ առաջադրվել է տուգանք 2.451.710 դրամի չափով:

Կարծում ենք, որ թիվ 1422409 Արձանագրությունը սխալ է կազմված, քանի որ համաձայն <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28 հոդվածի՝ 15.15.2013 թ-ին չէր կարող տուգանք առաջադրվել 15.05.2012 թ-ին կատարված խախտման համար /եթե նույնիսկ մեր կողմից այդպիսի խախտում կատարված լիներ/:

Տեղեկացնում են նաև, որ ընկերության կողմից ապրանքների առաքումը կատարվել է համապատասխան ուղեկցող փաստաթղթով /հարկային հաշիվ Ա9394533800, դուրս գրման ամսաթիվ 14.05.2013 թ., մատակարարման ամսաթիվ 14.05.2013 թ./, որը կազմակերպության աշխատակից Հոկոտեմ Առուշանյանի կողմից ներկայացվել է ստուգումն իրականացնող անձանց: Ապրանքների փաստացի առաքումը սկսվել է 14.05.2013 թ-ին ժամը 22:00-ի սահմաններում, քանի որ համաձայն մեր գործընկերոջ հետ պայմանավորվածության՝ ապրանքները պետք է նշանակված վայր հասնեին 15.15.2013 թ-ին՝ առավոտյան: Ճանապարհին ավտոմեքենան տեխնիկապես խափանվել է, իսկ վերանորոգումը տևել է մոտ 3 ժամ: Ավտոմեքենան վերանորոգվելուց հետո շարժվել է համապատասխան ուղղությամբ և 2013 թ-ի մայիսի 15-ին ժամը 10:00-ի սահմաններում եղել է Արտաշատ քաղաքի մոտ, որի մասին նշված է նաև Հոկոտեմ Առուշանյանի կողմից տրված հայտարարության մեջ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամանակ արձանագրված ապրանքների տեսակն ու ծավալն ամբողջությամբ համապատասխանել են հարկային հաշվում նշված տվյալներին:

Հաշվի առնելով վերը նշված փաստերն ընկերությունը խնդրում է չեղյալ համարել թիվ 1422409 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցչի և արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նախ հարկ է նշել, որ Արձանագրությունում, որը և հիմք է հանդիսացել վարչական ակտի կազմման համար, առկա է տեխնիկական վրիպակ: Մասնավորապես, Արձանագրությունում նշվել

է, որ 15.05.2012 թ-ին ժամը 10:00 սահմաններում <Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ-ի վարձու աշխատող վարորդ Հոկտեմ Ռոլանդի Առուշանյանը, ընկերությանը պատկանող <ԻՍՈՒՁՈՒ> մակնիշի 784ՄԼ52 համարանիշի բեռնատար ավտոմեքենայով իրականացնում էր ապրանքների առաքում՝ առանց համապատասխան ուղեկցող փաստաթղթերի:

Քննարկվող դեպքում Արձանագրությունում նկարագրված դեպքը տեղի է ունեցել ոչ թե 15.05.2012 թ-ին, այլ՝ 15.05.2013 թ-ին:

Սույն գործում առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ վարչական ակտն ընդունելիս, ըստ էության, հաշվի չեն առնվել <Վարչարարության հիմունքների և վարչկան վարույթի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հետևյալ դրույթները: Մասնավորապես, Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն. <1. Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:>

Իր հերթին, Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար>:

Քննարկվող դեպքում, երբ 15.05.2012 թ-ին ժամը 10:00-ի սահմաններում ՕՀՎ աշխատակիցները կանգնեցրել են <Գորիսի Միկրոշարժիչ> ԲԲԸ-ի ապրանքները տեղափոխող <ԻՍՈՒՁՈՒ> մակնիշի 784ՄԼ52 համարանիշի բեռնատար ավտոմեքենան, վերջինիս վարորդ Հոկտեմ Առուշանյանը ներկայացրել է տեղափոխվող բեռը ուղեկցող փաստաթուղթը՝ 14.05.2013 թ-ին ժամը 19:14-ին դուրս գրված թիվ Ա9394533800 հարկային հաշիվը: Սակայն, ՕՀՎ աշխատակիցները պատճառաբանելով, որ հարկային հաշիվը դուրս է գրվել 14.05.2013 թ-ին, այն որպես հիմք չեն ընդունել, այն դեպքում երբ, վարչական ակտով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքի հաշվարկման համար բացառապես հիմք են ընդունվել նշված հարկային հաշվում արտացոլված տվյալները: Վարչական ակտով պարտավորության հաշվարկման համար հարկային հաշվում արտացոլված տվյալները հիմք ընդունվելու հանգամանքն ընդունվեց նաև ՕՀՎ աշխատակիցների կողմից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով տեղափոխվող ապրանքների տեսականին ու ծավալները, ապրաքների մատակարարման և ապրանքների նշանակման վայրերի միջև ընկած հեռավորությունը, Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ըստ էության, առկա չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 1-ին բաժնի պետի 15.05.2013 թ-ի թիվ 1422409 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ